

Վերջին տարիների բարեփոխումները 5-6 տարով երիտասարդացրել են գիտությունը. ԿԳՆ
ԳՊԿ նախագահ



Գիտության զարգացման ռազմավարության ծրագիրը կարևոր և արժեքավոր փաստաթուղթ է, որն արդեն որոշակի պտուղներ է տվել: Այս մասին Tert.am-ի հետ զրույցում ընդգծեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և հավելեց. «Անկախության տարիներից մինչև 2008թ-ը գիտության ոլորտում ընդամենը մի քանի որոշում է եղել, իսկ 2008թ-ից մինչ օրս ոլորտին առնչվող 30 միջազգային համաձայնագիր է ստորագրվել, Կառավարության և վարչապետի ավելի քան 40 որոշում է ընդունվել: Որոշումների զգալի մասը համակարգաստեղծ նշանակության որոշումներ են: Ընդունվել է մեկ օրենք, երկու օրենք էլ Ազգային ժողովում է: Ընդունվել է մեզածրագրերի իրականացման մասին երկու որոշում, դրանք են CANDLE-ը և միջուկային բժշկության ծրագիրը»: Սամվել Հարությունյանը ավելացրեց նաև, որ գիտության ոլորտում վերջին 4-5 տարիներին Կառավարության կողմից ավելի շատ որոշումներ են ընդունվել, քան նախորդ 15 տարվա ընթացքում:

– Պարո՛ն Հարությունյան, գիտնականները հաճախ են բարձրաձայնում, որ իրենք առաջարկում են նախագծեր, օրինակ՝ վերականգնվող էներգետիկայի հետ կապված, բայց պետությունը մերժում է:

– Դուք խոսում եք գիտական արդյունքի առևտրայնացման մասին: Այն է՝ ունես գիտական արդյունք, որը պետք է ներդնես տնտեսության մեջ, կիրառես և ստանաս շահույթ: Հայաստանում, իրոք, այս հարցը շատ ցավոտ է: Որպեսզի կարողանանք առևտրայնացնել գիտական արդյունքը, անհրաժեշտ են մի քանի պայմաններ: Նախ, մասնավոր բիզնեսի կողմից գիտնականի կատարած աշխատանքի, նրան աջակցելու գիտակցում պետք է լինի, որը, ցավոք,

մասնավոր հատվածի ներկայացուցիչների մոտ առկա չէ: Այսինքն՝ մեզ մոտ ոչ այնքան գրագետ կապիտալիզմ է զարգանում և բիզնես ունեցողը գերադասում է տեխնոլոգիաներ գնել դրսից, որպեսզի հնարավորինս շուտ շահույթ ստանա: Մինչդեռ տնտեսվարողը պետք է գիտակցի, որ մեր գիտնականին պատվեր տալու դեպքում այն ավելի էժան է լինում և միևնույն ժամանակ օգնում էս քո պետությանն ու քո գիտնականին: Այս գիտակցությունը չկա մեր տնտեսվարողների մոտ, և դրա համար ժամանակ է պետք:

Միաժամանակ պետության կողմից քայլեր են անհրաժեշտ: Պետությունը պետք է կարողանա պայմաններ ստեղծել, որպեսզի մասնավորին ձեռնառու լինի աշխատել սեփական գիտնականի հետ: Այս հարցում ԳՊԿ-ն առաջին քայլն արել է: Արդեն երկրորդ անգամ իրականացնում ենք ինովացիոն ծրագրերի մրցույթ, որի պայմանը հետևյալն է. մասնավոր բիզնեսին առաջարկում ենք փորձակոնստրուկտորական տիպի գիտական ծրագրեր, որոնց ապրանքայնացման հնարավորությունները բավականին մեծ են: Պայմանները, որն առաջարկվում է մասնավոր բիզնեսին, շատ գայթակղիչ են: Պետությունը փորձակոնստրուկտորական բնույթի ծրագրի իրականացման համար վճարում է ծրագրի արժեքի 85 տոկոսը, իսկ մնացած 15 տոկոսը առաջարկվում է մասնավորին վճարել: Ծրագրի հաջող ավարտի պարագայում մասնավորը պետությանը հավասար իրավունքներով կարող է տնօրինել գիտական արդյունքը: Առաջին մրցույթին 43 նախագիծ մասնակցեց, շահեց 17-ը, որից 10 բավականին լուրջ առևտրայնացման նախադրյալներ ունեին: Այն այսօր հանձնված է Էկոնոմիկայի նախարարությանը՝ ի տնօրինություն: Դրանք կարող են վաճառվել որպես պատրաստի տեխնոլոգիաներ կամ կարող են կիրառվել մեր տնտեսության մեջ: Ի դեպ, ծրագրերից երկուսը մասնավոր ներդրողը արդեն իսկ կիրառում է ի շահ իր սեփական բիզնեսի: Այս տարի նույնպես իրականացվեց նմանատիպ մրցույթ, սակայն այս անգամ մրցույթի պայմանները փոքր-ինչ խստացվել էին: Առաջարկվել է հետևյալ պայմանը՝ 25 տոկոսը տալիս է գործարարը, 75 տոկոսը՝ պետությունը: Մնացած պայմանները նույնն են: Այս անգամ էլ մասնակցեց 40 ծրագիր, որից 16-ը որոշվեց ֆինանսավորել:

Սովորաբար կիրառական արժեք ունեցող գիտական ծրագրերը իրականացվում են երեք փուլով՝ ծրագրի ձևակերպման և հետազոտական աշխատանքների փուլ, ծրագրի փորձակոնստրուկտորական նախադրյալների պարզաբանման և հետագա իրականացման փուլ և վերջապես ծրագրի առևտրայնացման փուլ: Շատ հաճախ ծրագիրը ավարտվում է հենց առաջին փուլից հետո: Նման դեպքերում ասում են, որ ծրագիրը չունի առևտրայնացման հեռանկարներ և ավելորդ է իրականացնել փորձակոնստրուկտորական աշխատանքներ: Լինում են դեպքեր, որ ծրագիրը ավարտվում է երկրորդ փուլից հետո: Դա լինում է այն ժամանակ, երբ պարզվում է, որ առևտրայնացման համար կապիտալ ներդրումները

տնտեսապես ձեռնտու չեն կամ տվյալ երկրում նպատակահարմար չէ այն իրականացնել: Նման դեպքերում սովորաբար տեխնոլոգիան ներկայացվում է վաճառքի:

Գիտության պետական կոմիտեն լիազորված է իրականացնել կիրառական ծրագրերի առաջին երկու փուլերը: Երրորդ փուլը Էկոնոմիկայի նախարարության լիազորությունների շրջանակում է: Կարծում եմ, այսօրվա Հայաստանի Հանրապետությունն իր տնտեսության սահմանափակ հնարավորություններով ի վիճակի չէ շատ մշակումներ կիրառել իր սեփական տնտեսության մեջ, այդ իսկ պատճառով կարծում եմ կարելի է ավելի ակտիվ աշխատել նոր տեխնոլոգիաների ստեղծման և վաճառելու ուղղությամբ: Նման վարքագիծ դրսևորեց Իսրայելը անցած դարի 70-ական թվականներին և այսօր, մասնավորապես դեղագործության ոլորտում, տիրապետում է մեծ թվով տեխնոլոգիաների. դրանք և՛ վաճառում է, և՛ միաժամանակ օգտագործում:

– Իսկ ձերացող գիտությունը և գիտական լավ կադրերի արտահոսքը խնդիր չէ՞:

– Նախևառաջ, գիտնականների թվաքանակը խորհրդային ժամանակներում և հիմա չեն կարող տարբեր չլինել: Խորհրդային ժամանակներում Հայաստանում մոտ 33 000 գիտնական է եղել, այսօր Հայաստանում գիտությամբ զբաղվողների թվաքանակը 7 000-ի է հասնում, այսինքն՝ գրեթե 5 անգամ նվազել է:

– Սա վատ ցուցանիշ չէ՞:

– Խնդիրն այն է, որ 33 000 գիտնական այն ժամանակ ծառայում էր Սովետական Միությանը, այսինքն՝ մեր գիտնականը, մեր հետազոտական ինստիտուտների 70 տոկոսը կիրառական գիտությամբ էին զբաղվում և ունեին միութենական նշանակություն: Օրինակ՝ Ֆիզիկայի ինստիտուտը, մաթեմատիկական մեքենաների և այլ բազմաթիվ ինստիտուտներ միութենական նշանակության ինստիտուտներ էին, այսինքն՝ այդ հիմնարկները ծառայում էին գերտերությանը: Միայն Հայաստանի համար դա շատ մեծ թիվ է, իսկ Խորհրդային Միության համար՝ նորմալ: Հիմա մենք ունենք 7000 աշխատող, որից 4000-ն է գիտնական, մյուս 3 000-ը սպասարկող անձնակազմն է, և այդ 4000-ը մեր պետության համար նորմալ թիվ է: Մենք խնդիր ունենք գիտնականների տարիքի հետ կապված: Մեզ մոտ դոկտորների միջին տարիքը 60-ից անց է, իսկ թեկնածուներինը՝ 55-ից անց: Սա նորմալ ցուցանիշ չէ, և խոսում է գիտության ձերացման մասին, չնայած գիտության ոլորտում վերջին 4-5 տարիներին իրականացրած բարեփոխումները 5-6 տարով երիտասարդացրել են գիտությունը, ինչն, ըստ իս, բավականին լավ արդյունք է:

– Այնուամենայնիվ երկրից գնում են որակյալ ու երիտասարդ կադրերը:

– Իհարկե, երբ գիտնականը գնում է և չի վերադառնում, դա մեծ ցավ է, բայց եկեք ուրիշ տեսանկյունից նայենք. երկրում սոցիալական ծանր խնդիրներ ունենք: Իտալիան, որը

բարեկեցիկ երկիր է համարվում, այդ երկրի քաղաքացին, եթե բարձր աշխատավարձի առաջարկ է ստանում, գնում է օրինակ՝ Միացյալ Նահանգներ, բայց կապերը իր նախկին լաբորատորիայի հետ շարունակվում է: Նույնը մեզ մոտ է: Եթե ուշադրություն դարձնեք՝ վերջին 15-20 տարիների ընթացքում մեր հանրապետությունից դուրս գնացած գիտնականների զգալի մասը մեզ հետ սերտ համագործակցում է: Եվ «Հայ գիտնականների համախմբման» ծրագիրը, որն ընդունվեց Կառավարության կողմից, և այն դրամաշնորհները, որ մենք այսօր ունենք, հիմնականում ստացվել են մեր նախկին աշխատողների գործադրած ջանքերի շնորհիվ, այն գիտնականների, որոնք նախկինում աշխատում էին Հայաստանում և հիմա դարձել են աշխարհի լավագույն լաբորատորիաների աշխատակիցներ և մեզ հետ սերտորեն համագործակցում են: Մեր պետության ամենակարևոր խնդիրներից մեկն այսօր պետք է այն լինի, որ ունենանք հստակ պետական ծրագիր, որի շնորհիվ այնպես անենք, որ լավ գիտնականների գոնե մի մասը վերադառնա հայրենիք և այստեղ աշխատի: Այստեղ ստեղծենք նորմալ պայմաններ, որ մարդը կարողանա իր ընտանիքը կերակրել: Եվ շատ հաճախ, դուրս գնացող գիտնականը համաձայն է այստեղ 1000 դոլարով աշխատել, քան դրսում՝ 5000 եվրոյով: Ինքս արտասահմանում եմ աշխատել. 4 տարի աշխատել եմ Ֆլորենցիայի համալսարանում՝ շատ բարձր աշխատավարձով: Գերադասել եմ վերադառնալ և իմ գործն անել Հայաստանում: Եվ շատ շատերը կան, որ այդպես են վարվում: Եվ եթե մեր տաղանդավոր, երիտասարդ գիտնականներին կարողանանք գոնե 1000-1500 դոլար աշխատավարձ վճարել, հույս ունեմ, որ նրանց զգալի մասը հետ է վերադառնալու: Այ, մեր հիմնական խնդիրը հիմա դա է:

– Գիտական կոչումների մասին խոսենք, եթե կարելի է:

– Գիտական կոչումներով զբաղվում է Կրթության և գիտության նախարարությունն ու Բարձրագույն որակավորման հանձնաժողովը (ԲՈՀ), սակայն ես իմ կարծիքը գիտական աստիճանաշնորհման համակարգի և գիտական աստիճանների մասին բազմիցս նշել եմ: Կարող եմ մեկ անգամ ևս այն կրկնել. կարծում են գիտական երկու աստիճան ունենալը ավելորդություն է: Անկեղծ ասած, ես չեմ հասկանում, թե ինչ ասել է գիտության թեկնածու: Ենթադրում եմ, որ ապագայում թեկնածուական դիսերտացիաների մակարդակը պետք է բարձրացնել, մոտեցնել դոկտորականին, և միանգամից դոկտորի կոչում տալ: Ինչ վերաբերվում է ԲՈՀ-ին, ապա կարծում եմ գիտական աստիճանաշնորհման համակարգում որոշակի բարեփոխումներ իրականացնելուց հետո ԲՈՀ-ի լիազորությունները կամաց-կամաց անհրաժեշտ է փոխանցել գիտական բարձր վարկանիշ ունեցող ԲՈՀ-երին կամ գիտական հիմնարկներին: Ռուսաստանն, օրինակ, այդ հարցում առաջին քայլն արդեն արել է: Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանները ունեն գիտական աստիճաններ շնորհելու համապատասխան լիազորություններ: Պետք չէ վախենալ, թե կսկսվի թեկնածուների

և դոկտորների դիպլոմների համատարած առևտուր: Չեմ կարծում, որ օրինակ՝ Երևանի պետական համալսարանի նման բարձր վարկանիշ ունեցող հիմնարկը իրեն նման բան թույլ տա: Վերջին հաշվով առողջ մրցակցության պայմաններում այդ արատավոր երևույթները չեն կարող չվերանալ: Եթե, օրինակ, դու գիտական աստիճան ես ստացել ԵՊՀ-ում կամ Ֆիզիկայի ինստիտուտում, դա նշանակում է գործ ունենք լուրջ գիտնականի հետ, իսկ եթե պաշտպանել ես, ասենք՝ Գորիսի ինչ-որ մասնավոր, գիտական հանրությանը անհայտ բուհում, ապա դու չես կարող այն օգտագործել որևէ լուրջ գիտական կամ գիտակրթական հիմնարկում:

Նենց այդ կոչմանն էլ ուզում էի անդրադառնալ՝ պատմափիլիսոփայական գիտությունների դոկտոր...

— Այդպիսի գիտական աստիճան Հայաստանում գոյություն չունի:

Կրկին անդրադառնանք գիտնականներին...

— Մեր գիտական հանրությունը մի քիչ տարբերվում է մեր ժողովրդի մնացյալ հատվածից: Գիտնականներն ավելի քիչ հայրենասեր չեն: Այսօրվա ծանր պայմաններում մնալ և արարել Հայաստանում, կարծում եմ, անչափ կարևոր է և անհրաժեշտ մեր պետությանը: Գիտնականները ավելի նրբազգաց են, ավելի շուտ ոգևորվում և ավելի շուտ վիրավորվում են: Կուզենայի, որ գիտնականի նկատմամբ վերաբերմունքը փոխվեր: Այնպիսի իրավիճակում հայտնվենք, որ գիտնականը կամաց-կամաց նույն արժեքն ունենար, ինչ խորհրդային ժամանակներում է եղել: Այն տարիներին շատ բարձր պատիվ էր լինել գիտության թեկնածու: Երևի թե դա ապագայի խնդիր է: Մեր գիտական հանրությունն էլ պետք է համբերատար լինի, ըմբռնումով վերաբերվի մեր, կարծում եմ, ժամանակավոր դժվարություններին և գործուն աջակցություն ցուցաբերի այսօր իրականացվող բարեփոխումներին, որպեսզի այդ դժվարությունները հնարավորինս շուտ ավարտվեն: